# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«2» ապրիլի 2016թ.

**Հաստատում եմ՝**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Ս. Անանյան

ԳԲԽ-26/16 բողոքը քննող

հանձնաժողովին

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ավանգարդ» ՍՊԸ-ի 15.03.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 15.03.2016թ. ներկայացրած բողոքով «Ավանգարդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՔԿՀ(16)-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝

Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգի 14 չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Ավանգարդ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը 18.02.2016թ. ստացել է ծանուցում, որի համաձայն՝ Ընթացակարգի NN 15.23 չափաբաժիններով «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկները նվազագույնն են եղել և վերջինս ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որի հետ պետք է կնքվի պայմանագիր: Ընկերությունից պահանջվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, և քանի որ Ընթացակարգի NN 15.23 չափաբաժինների համար Ընկերության ներկայացրած գնային առաջարկը ակնհայտ ցածր և չհիմնավորված է եղել, ապա այդ հիմքով նաև պահանջվել է ներկայացնել հինավորում՝ ցածր գնի վերաբերյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները): Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը գնահատում է ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնայինև ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը համարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն

էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը: Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

«ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչության» կարիքների համար՝ «Սննդամթերքի» ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և նույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ

զբաղեցրած մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին «nina.mkrtchyan@list.ru» է ուղարկում նույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է՝

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

բ) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընկերությունը նշել է, որ պահանջվող փաստաթղթերը հրավերում նշված էլեկրոնային փոստին է ուղարկել սահմանված ժամկետում՝ 23.02.2016թ (3 աշխատանքային օրում, ծանուցումը ստացվել է 18.02.2016թ՝ հինգշաբթի, փաստաթղթերը ուղարկվել 23.02.2016թ. երեքշաբթի):

Ըստ «Ավանգարդ» ՍՊԸ-ի՝ ակնհայտ է, որ Ընկերության հայտը «հրավերի պահանջներին չհամապատասխանող» հայտերի ցուցակում ընդգրկելը՝ «չի ներկայացրել համապատասխան փաստաթղթեր, ըստ հրավերի պահանջի» հիմնավորմամբ, իրավական հիմք չունի, քանի որ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է:

Վերոգրյալի արդյունքում Ընկերությունը գտնում է, որ ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն կողմից խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի, 5-րդ մասի 2-րդ և 6-րդ մասերով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ն կետը՝ «Ավանգարդ» ՍՊԸ-ն խնդրել է.

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՔԿՎ(16)-1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 12.03.2016թ N 8 որոշումը, մասնավորապես «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը «հրավերի պահանջներին չհամապատասխանող» հայտերի ցուցակում ընդգրկելը, հաշվի առնելով, որ որոշման կատարումը կհանգեցնի պայմանագրի զգալիորեն բարձր գնով կնքելուն, ինչի հետևանքով կխախտվեն գնումների գործընթացի կազմակերպման հիմնական նպատակը՝ արդյունավետ գնով ապրանքների ձեռքբերումը,

2) դադարեցնել գնահատող հանձնաժողովի՝ «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը և վերականգնել «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը:

«Ավանգարդ» ՍՊԸ-ն, ի լրումն 15.03.2016թ. բողոքի, 22.03.2015թ. գրությամբ ներկայացրել է բողոքի լրացում, որի համաձայն՝ Ընկերությունը խնդրել է 15.03.2016թ. բողոքում նշված NN 15.23 չափաբաժինների փոխարեն նկատի ունենալ N 15-րդ և N 32-րդ չափաբաժինները:

**2. <u>ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**

Կենտրոնը 17.03.2016թ. թիվ 01/04.1/996-16 գրությամբ ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչությանը խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՔԿՀ(16)-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճեն-ները և տալ կարծիք:

Պատվիրատուն Կենտրոնին է ներկայացրել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

**3. <u>ԳԲԽ-26/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ԳԲԽ-26/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

**1.** ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՔԿՀ(16)-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգի 14 չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Ավանգարդ» ՍՊԸ-ն:

**2.** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. փետրվարի 16-ին ժամը 10:00-ին կայացած նիստի արձանագրության՝

- 1.8.8 կետի համաձայն՝ Ընթացակարգի 15-րդ և 32-րդ չափաբաժիններով որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ավանգարդ» ՍՊԸ-ն:
- 1.8.16 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ավանգարդ» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որակի հավաստագրերը, ծագման երկրի հավաստագրերը, ինչպես նաև նմուշները: «Ավանգարդ» ՍՊԸ-ի առաջարկած գները Ընթացակարգի 15-րդ և 32-րդ չափաբաժիններով ցածր են եղել 75%-ից, որի վերաբերյալ ***Ընկերությունը պետք է ներկայացնի գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող հիմնավորում ցածր գնի վերաբերյալ:***

**3.** Ընթացակարգի քարտուղար՝ Ն. Մկրտչյանը, oooavangard@list.ru էլեկտրոնային փոստին ուղղված ծանուցումամբ հայտնել է, որ Ընթացակարգի 15-րդ և 32-րդ չափաբաժիններով որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ավանգարդ» ՍՊԸ-ն, որի հետ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ պետք է կնքվի պայմանագիր: Ծանուցմամբ Ընկերությունից պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որակի հավաստագրերը, ծագման երկրի հավաստագրերը, ինչպես նաև նմուշները: Ծանուցմամբ նշվել է նաև, որ Ընթացակարգի

15-րդ և 32-րդ չափաբաժինների համար Ընկերության ներկայացված գնային առաջարկը ակնհայտ ցածր և չհիմնավորված է եղել, ուստի ծանուցմամբ խնդրել են ներկայացնել ***գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող հիմնավորում՝ ցածր գնի վերաբերյալ:***

**4.** Որպես չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորում Ընկերության կողմից ներկայացվել է հետևյալ տեսքով հաշվարկ.

***ցորենածավար***

| | |
|---|---|
| ձեռքբերման գին ԵՏՄ անդամ երկրում | 145.93 ՀՀ դրամ |
| տրանսպորտային ծախսեր | 4,5 ՀՀ դրամ |
| շահույթ | 7.9 ՀՀ դրամ |
| ԱԱՀ | 31.67 ՀՀ դրամ |
| վաճառքի գին | 190 ՀՀ դրամ |

***հալած յուղ***

| | |
|---|---|
| ձեռքբերման գին ԵՏՄ անդամ երկրում | 691.87 ՀՀ դրամ |
| տրանսպորտային ծախսեր | 12,8 ՀՀ դրամ |
| շահույթ | 37 ՀՀ դրամ |
| ԱԱՀ | 148.33 ՀՀ դրամ |
| վաճառքի գին | 890 ՀՀ դրամ |

Գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ն պարտադիր է ցորենածավարը մատակարարել 1 կգ 190 ՀՀ դրամ գնով, հալած յուղը՝ 1 կգ 890 ՀՀ դրամ գնով:

**5.** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. փետրվարի 23-ին ժամը 12:00-ին կայացած նիստի արձանագրության՝

- 1.5 կետի համաձայն՝ Ընթացակարգի 15-րդ և 32-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «***Ավանգարդ» ՍՊԸ-ն չի ներկայացրել ինչպես անհրաժեշտ փաստաթղթերը***, այնպես էլ առաջարկվող ապրանքների նմուշները:
- 2.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 15-րդ և 32-րդ չափաբաժինների մասով մերժել, քանի որ երեք աշխատանքային օրվա ընթացքում ***չի ներկայացվել համապատասխան փաստաթղթեր***, ըստ հրավերի պահանջի:

**4. ԳԲԽ-26/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ավանգարդ» ՍՊԸ-ի 15.03.2016թ. ներկայացրած բողոքը և ի լրումն բողոքի ներկայացրած 22.03.2016թ. գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՔԿՀ(16)-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ***ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ:*** Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ***ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար***

***համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Ընկերությունը հայտի գնային առաջարկում Ընթացակարգի 15-րդ չափաբաժնով՝ ***«ցորենաձավար»*** գնման առարկայի մեկ միավորի համար նշել է ***վաճառքի գինը՝ 190 ՀՀ դրամ***, 32-րդ չափաբաժնով՝ ***«հալած յուղ»*** գնման առարկայի մեկ միավորի համար նշել է ***վաճառքի գինը՝ 890 ՀՀ դրամ***, ինչը ցածր է եղել տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով, «Ավանգարդ» ՍՊԸ-ից Ընթացակարգի 15-րդ և 32-րդ չափաբաժինների մասով պահանջել է ներկայացնել 75%-ից ցածր գնային առաջարկի վերաբերյալ հիմնավորում՝ ***գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող:***

Վերը նշված չափաբաժինների մասով, որպես ներկայացված չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորում, Ընկերության կողմից ներկայացվել է հետևյալ տեսքով հաշվարկ, որը վերնագրվել է որպես «Գնային առաջարկի հիմնավորում».

***ցորենաձավար***

| | |
|---|---|
| ձեռքբերման գին ԵՏՄ անդամ երկրում | 145.93 ՀՀ դրամ |
| տրանսպորտային ծախսեր | 4,5 ՀՀ դրամ |
| շահույթ | 7.9 ՀՀ դրամ |
| ԱԱՀ | 31.67 ՀՀ դրամ |
| վաճառքի գին | 190 ՀՀ դրամ |

***հալած յուղ***

| | |
|---|---|
| ձեռքբերման գին ԵՏՄ անդամ երկրում | 691.87 ՀՀ դրամ |
| տրանսպորտային ծախսեր | 12,8 ՀՀ դրամ |

| | |
|---|---|
| շահույթ | 37 ՀՀ դրամ |
| ԱԱՀ | 148.33 ՀՀ դրամ |
| վաճառքի գին | 890 ՀՀ դրամ |

Գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ն պարտրաստ է ցորենաձավարը մատակարարել 1 կգ՝ 190 ՀՀ դրամ գնով, հալած յուղը՝ 1 կգ 890 ՀՀ դրամ գնով:

Պատվիրատուն, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով, ոչ բավարար է համարել հիմնավորումը, քանի որ «Ավանգարդ» ՍՊԸ-ից Ընթացակարգի 15-րդ և 32-րդ չափաբաժինների մասով պահանջվել է ներկայացնել 75%-ից ցածր գնային առաջարկի ***գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող*** հիմնավորումներ, մինչդեռ, ըստ Պատվիրատուի, Ընկերության կողմից չի ներկայացվել ***գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող հիմնավորում,*** այլ Ընկերությունը ներկայացրել է ընդամենը վկայակոչված հաշվարկը:

Ինչ վերաբերում է «Ավանգարդ» ՍՊԸ-ի 15.03.2016թ. բողոքով ներկայացրած այն պնդմանը, որ Ընկերությունը հրավերում նշված էլեկրոնային փոստին սահմանված ժամկետում ուղարկել է պահանջվող փաստաթղթերը և անհիմն է «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը «հրավերի պահանջներին չհամապատասխանող» հայտերի ցուցակում ընդգրկելը՝ «չի ներկայացրել համապատասխան փաստաթղթեր, ըստ հրավերի պահանջի» հիմնավորմամբ, քանի որ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են, ապա այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 15-րդ և 32-րդ չափաբաժինների մասով մերժվել է ոչ թե որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված **փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով**, այլ **«Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը (գնային առաջարկի գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող հիմնավորում) չներկայացնելու հիմքով:**

Նկատի ունենալով, որ Ընթացակարգի 15-րդ և 32-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի 2016թ. փետրվարի 23-ին ժամը 12:00-ին կայացած նիստի արձանագրության 2.2 կետով կայացված որոշումը համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի առաջարկում ենք «Ավանգարդ» ՍՊԸ-ի 15.03.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-26/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան